

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

Պատմական Հայաստանի գավառներից մեկը՝ Գողթնը, որի տարածքը ընդգրկում է այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ Որդուրազի շրջանը, հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ասպարեզում էական նշանակություն է ունեցել: Այդ դավառի հնամենի բնակատեղիներից ու պատմա-ճարտարապետական շուշարձանների ավերակներից հայտնաբերվում են վաղ շրջանի նյութական մշակույթի ամբողջական ու բեկորային հատվածներ: Խնդրոտ առարկա վիմագիրը դրսևրվում է Գողթնի պատմական նորակերտ՝ ժողովրդական ավանդությանը նոր Գյուտ (այժմ՝ Նիրգուդ) գյուղի եկեղեցու որմնում: Բանուկ ճանապարհներից հեռու այդ գյուղի տարածքի նյութական մշակույթի մնացորդների և հուշարձանների ուսումնասիրությունը հավաստում է, որ հայարևակ այս գյուղը գոյություն է ունեցել շատ վաղուց: Գյուղի մերձակայքի հին շրջանի բերդից և հիմնադատակ ավերված մեկ այլ եկեղեցուց բացի, կիսախաթար վիճակում կանգուն է նաև նրա եկեղեցին, որի մասին աղբյուրներում, ցափք, բավարար տեղեկություններ չեն պահպանվել: Այս եկեղեցին (բստ հատակագծի քառամույթ եռանավ բազիլիկա է) ամբողջական համալիրից մնացած միակ շինությունն է. այն մի քանի անգամ վերանորոգվել է: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա արսիդը, որի հատակը համահավասար է դահլիճի հատակին՝ մի հատկանիշ, որը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարյան եկեղեցիներին: Եկեղեցու նորոգումներից մեկի ժամանակ, որպես նրա հարավային ավանդատան բարավոր, տեղադրվել է արձանագրված, բազալտե մի խաչքար (նկ. 1), որը յավ մշակված է և ունի 1,20—1,30 մ երկարություն: Խաչքարի կենտրոնում՝ ուղղանկյուն խորանի հարթեցված մակերեսում, փորագրված է մետաղաձույլի տպավորություն թողնող յայն թևերով խաչ: Վերին խաչաթևի երկու կողմերում, որոշակի թեթևությամբ, քանդակված են իրար միացված երեքական սիմվոլիկ, ընդգծվող կետեր: Հորիզոնական խաչաթևի վրա պատկերված են մեկական փոքրիկ բարձրաքանդակ խաչեր, իսկ ներքևի խաչաթևի երկու կողմերում՝ բնական մեծությամբ երկու ձեռքերի պատկերներ (վերջիններս թռչնապատկերների

տպավորություն են թողնում): Խաչաթևերի հատման մասում խորաքանդակ փոքրիկ խաչի պատկերն է: Խորանից դուրս, քարի ճակատային մակերեսում և ներքևի խաչաթևի երկու կողմերում ու նրա տակ՝ կան արձանագրություններ, որոնք, բացի ճակատին փորագրված արձանագրության առաջին տողից, ընթերցվում են հետակորեն:

Նախքան վիմագրության վերծանմանն անցնելը նշենք, որ այս խաչքարի ձևի, դարդերի, ինչպես նաև զրչական տվյալների համեմատական քննությունից հանգել ենք այն եզրակացության, որ նրա վրա քանդակված են երկու տարբեր արձանագրություններ, որոնցից առաջինը երկու տողանոց՝ 730 թ. համառոտ վիմագրություն է, իսկ երկրորդը բաղկացած է 8 տողից և քանդակված է բոլորգրով՝ 951 թ.: Հավանաբար, այդ քարը պատկանել է եկեղեցու նախկին շինությանը և եղել է ավելի երկար: Ըստ երևույթին, X դ. այն փոքրացրել են և կանգնեցրել պատվանդանի վրա՝ իրեն խաչքար:

Մեզ հետաքրքրող 730 թ. արձանագրության փաստական լինելը ապացուցելու համար նախանդրադառնանք 951 թ. արձանագրությանը: Այս արձանագրության առաջին շորս տողերը քանդակված են քարի ճակատային մասում, իսկ մյուս 4-ը՝ ներքևում, որն ընդամենը մի անձնանուն է (նկ. 2, զրչանկար): Մեր վերծանությամբ արձանագրությունը հետևյալն է.

- 1
- 2 ո արային թվ. և [951]
- 3 խաչ .ս. յիշատ
- 4 ա կ
- 5 յ ո
- 6 ա
- 7 նիս
- 8 ի ն

Իժրախտաբար, արձանագրության առաջին տողը լրիվ քայքայվել է և որոշակի դժվարություն է ներկայացնում վիմագրության ամբողջական բովանդակությունը վերծանելու համար: Առաջին տողից պահպանված միակ տառը «-ն» է, որը երկրորդ տողի սկզբում է և անչատ-

վում է Արային անձնանունից: Արձանագրու-
թյան 4-րդ տողում. ուր ազատ տեղ կա. գրի:Շ
բաց է թողել և օժանդակ բայը. իսկ Յոհանի-
սին անձնանունը բանդակել է յոթանիսինս,
որո. մեր կարծիքով. ոչ թե գրչի անզրագիտո-

ս(ուրբ)ս: Աննչան շափով քայքայված են 3-րդ
տողի վերջի տ և 7-րդ տողի ս տառերը: Ար-
ձանագրության սթվ. Կս-ի հստակորեն կար-
դացվող և տառը, որի վրայի պատվի նշանը,
հավանաբար, քայքայվել է 1-ին տողի հետ,



նկ. 7


թյան արդյունքն է. այլ ժողովրդական արտա-
հայտության ձև է: Արձանագրության 3-րդ տո-
ղում սխալ .ա.բ բառի ս տառը երկու կողմե-
րից անջատված է կետերով, որը հավանաբար,
գրչության մեջ օգտագործվող հապավման ձև է:
Այդ հատվածը կարելի է ընթերցել նաև սխալս

վերձանում ենք որպես տարեթիվ, որը և 951 թ.
(400+551=951) է: Այս արձանագրության X դ.
պատկանելու օգտին են խոսում նաև նրա բո-
լորգիր գրչության տվյալները: Իսկ բոլորգիրը
հայոց գրչության մեջ X դ. արդեն գործածվում

էր: Երկաթագրից բոլորգրին անցման շրջանում մի շարք տառեր (Ջ, Ը, Յ, Ջ, Յ, Լ և այլն) փոքրատառերի վերածվելով, կրել են նկատելի ձևափոխություններ: Քննվող արձանագրության մեջ այդպիսի տառերից են յ-ն և մ-ն, որոնցից առաջինը օգտագործված է երեք անգամ, իսկ երկրորդը՝ մեկ:

2. Աճառյանը Յ երկաթագիր տառի կրած

ձևափոխությունների մասին նշել է. «Ամենաինն ժամանակներն արդեն երկաթագրի մեջ տառիս ձևափոխության կետը շնչվելով մեացած էր միայն երկու կտրակ... Այնուհետև միջին գիծը կհասնում էր կմնա միայն կիսալուսինը... ինչպես կգտնենք Տեկոսի 964 թվի արձանագրության մեջ (Շողակաթ, թ. 15), բայց ամբողջ տողին վրա և ոչ թե տողին վարձ»:



նկ. 2

1 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ 23—24:

2 Լ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 435: Տեկոսի խաչքարի արձանագրության լուսանկարը և գրչանկարը տե՛ս Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 46—47:

Փրշագրման այս եղանակով է քանդակված նաև Սարիղամիշի 992 թ. արձանագրության 1-ն³, Ինչպես նկատում ենք, բուրգրի կազմավորման չին շրջանում յ տառը գրվել է տողի վրա: Այդ սկզբունքով է քանդակված նաև Նորակերտի արձանագրության 4-րդ, 3-րդ և 5-րդ տողերի յ տառը: Իսկ Վ տառի կրած ձևավորությունների մասին Հ. Աճառյանը գրում է. «...երկաթագրի մեջ շատ չին ժամանակին երկու տեսակ Վ կար. մեկը հավասար սյուններով, երկրորդը Վ ձևին պես: Բուրգրի մեջ ալ ժամանակ մը կշարունակվի առաջին ձևը...»⁴ Նորակերտի արձանագրության 2-րդ տողում քանդակված Վ տառի երկու սյունները միևնույն բարձրության են: Նմանօրինակ Վ-եր ունենք նաև Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու մի շարք արձանագրություններում, որոնք վերաբերվում են 895—906 թթ.⁵:

Նորակերտի խաչքարի կարևոր նշանակություն ունեցող Նաչորդ արձանագրությունը քանդակված է ներքևի խաչաթևի տակ և միայն տարեթիվ է.

Թ. ՃԶ

Թ. . .

Առաջին Թ-ից չետո նկատվում է կետի նշան, իսկ վերջին Թ-ից չետո՝ խաչաձև շորս կետ: Վերջիններս խորհրդանշում են արձանագրության ավարտը: Ազոտ է նշմարվում միայն Ծ տառի ներքևի ուղիղ խարիսխը: Տեղում կատարած մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ տառը կարող է միայն ու միմիայն Ծ լինել, որն, առհասարակ, չին արձանագրություններում քիչ օգտագործված տառ է: Այս արձանագրության տառերի ձևը ընտրող է վաղ շրջանի վիմագրերին: Օրինակ, Թ տառը իր գրչությամբ նման է էջմիածնի ս. Հռիփսիմեի Կոմիտաս կաթողիկոսի 618 թ. արձանագրության 3-րդ տողի⁶, Քալինի Ուխտատուր վանականի 783 թ. արձանագրության⁷ 1-ին և 5-րդ

3 Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 53:

4 Հ. Ա Ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 447:

5 «Գիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց Ս. Բ ա Ր խ ո ս Պ ա Ր յ ա ն, Երևան, 1960, էջ 14, արձ. № 3—7:

6 Ի. Ա. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, с. 407, գրչանկար, Գ. Հո վ ս ե փ յ ա ն, Գրչության արվեստը չին հայոց մեջ, մասն Գ, Վաղարշապատ, 1913, տախտ. Բ, նկ. 3:

7 Գ. Հո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., տախտ. է, նկ. 11:

տողերի Թ-ին: Իսկ Հ-ն իր գրչությամբ չի նշանում է նախնականի Արտավազդ Կամսարականի տապանաքարի արձանագրության 2-րդ և 4-րդ տողերի⁸, Արուճի Գր. Մամիկոնյանի 668 թ. արձանագրության 2-րդ և 5-րդ տողերի⁹, Քալինի Ուխտատուր վանականի արձանագրության 1-ին տողի Հ տառերին: Այս զուգահեռները խոսում են այն մասին, որ Նորակերտի չիչայ արձանագրության տառերը, իրենց գրչությամբ և հնագրությամբ, համապատասխանում են VII—VIII դդ. տառերի ոճին:

Այսպիսով, 951 թ. արձանագրությունը թե՛ իր տարեթիվով, թե՛ տառատեսակով կապ չունի այս արձանագրության հետ: Հետևաբար, անիմաստ է սա կցել նախորդին՝ վերանայնով որպես 1521 թ. (970 + 551 = 1521) կամ 1530 թ. (979 + 551 = 1530): Իսկ բացատրվում է նաև հետևյալ հանգամանքներով:

1. Գծվար թե արձանագրության մեջ միայն տարեթիվը ընդգծելու համար այն փորագրվել երկաթագրով՝ ազատ և ընդգծվող ձևով:

2. Երկու արձանագրությունների մեջ էլ օգտագործված է գլխատառ Հ, որոնք իրենց գրչությամբ լապես տարբերվում են միմյանցից: Եթե «Թ. ՃԶ»-ի Հ-ն իր բացվածքով սուր անկյան տեսք ունի, ապա մյուս արձանագրության Հ-ն բացված անկյան տեսքով է: Եթե 1-ին Հ-ն առանց վերևի պոչիկի է, բավական թավ և վայրահակ ոտքով, ապա 2-րդը պոչիկով է և աննշան ոտքով:

3. Հանրահայտ է, որ խաչքարերը կանգնեցվել են ամենատարբեր առիթներով՝ ի հիշատակ ապագա սերունդներին: Հետևաբար, հիշատակագրվողների անունները փորագրվում էին հնարավորին շափ խնամքով ու զեղեցիկ՝ աչքի ընկնող տեղերում: Նորակերտի արձանագրության մեջ այդպիսինքն անձնանունը, շորս տողի վերածվելով, քանդակվել է խաչքարի ներքևի խաչաթևի երկու կողմերում, որը ոչ միայն անհարմար տեղում է, այլ դժվար նշմարելի է: «Յոսահիսին» բառի տեղադրվածությունը ևս հաստատում է, որ մինչև 951 թ. արձանագրության փորագրումը այդ քարի վրա եղել է «Թ. ՃԶ»-ն, որի պատճառով վիմագրողը, ստիպված, անձնանունը տեղադրել է նրա երկու կողմերում: Հին արձանագրության առկայությունը 951 թ. արձանագրության փորագրողին ստիպել է, այդ երկուսը միմյանցից անջատելու համար, ներքևի խաչաթևի երկու կող-

8 Ի. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ 411, գրչանկար, Գ. Հո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., տախտ. Ե, նկ. 10:

9 Ե. Հո վ ս ե փ յ ա ն, նշվ. աշխ., տախտ. Զ, նկ. 9:

մերից կիսաչրչանածն տաշել և սահմանազատող գոտի ստեղծել:

Ոչնչևի վերը նշված առանձնահատկություններից, գտնում ենք, որ «Ք. ՃՁՔ»-ն վերծանվում է հայկական մեծ թվականով՝ Ք(ՎԻՆ) ՃՁՔ ($179 + 551 = 730$), իսկ հայկական մեծ թվականը, ինչպես հայտնի է, հայոց մեջ պաշտոնապես ընդունվել և գործածության մեջ է դրվել VI դ. 80-ական թվականներից, որը թեև

ունեցել է սահմանափակ, բայց իրական կիրառություն: Այսպիսով, նորակերտի 730 թ. արձանագրությունը հայկական մեծ թվականով մեզ հասած նազույն վիճագրություններից մեկն է, եթե ոչ ամենահնազույնը: Ի դեմս այս վիճագրության մենք ունենք VIII դ. հայկական մեծ թվականի կիրառության իրական փաստ:

Ա.ԲԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ